ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՓ-ԷԱՃԱՊՁԲ-25/85 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	Վերնաշապիկ՝ սպիտակ, դասական ձևի, կորպորատիվ ոճի, նախատեսված կորպորատիվ աշխատակիցների համար: Արտադրության ընթացքում տրամադրվում են բոլոր ստանդարտ չափերը՝ XS – XXXL: Չափերը ճշգրտվում են պատվիրատուի կողմից տրամադրված չափագրման աղյուսակով: Օգտագործվող կտորը՝ T/C (TISI) 92% բամբակ, 8% սպանդեքս: Բամբակի նվազագույն պարունակությունը՝ 50%, Կտորի խտություն՝ 150–180 գ/մ²: Կտորի նախնական մշակում՝ թելերի ամրացման և գունային կայունության ապահովման համար: Ոճը՝ դասական, ուղիղ կամ թեթև սեղմված ձևով: Թևքեր՝ կիսաերկար (միջին երկարություն), եզրագոտին՝ 4–5 սմ լայնությամբ, կենտրոնական հատվածում ճեղքով: Օձիք՝ ծալովի, պատրաստված սատինե գործվածքից՝ խտությունը 80–90 գ/մ²: Եզրագիծը մշակված է զարդակարով: Առջևի հատված՝ բաղկացած է երկու լանջափեղերից: Յուրաքանչյուր կողմ մշակված է մեկ կարճ և մեկ ուղղահայաց սեղմոնով: Լանջափեղքերի միացումը կատարվում է կոճակներով: Կոճակների շարքը քողարկված է 2–3 սմ լայնությամբ դարձով: Հետնամաս՝ մեկ կտորից: Գոտկային հատվածի ձևավորումն ապահովված է երկու ուղղահայաց սեղմոններով: Կարերը՝ երկակի, ամրացված, յուրաքանչյուր կար մաքուր մշակված: Լանջափեղքերի ծայրերը մշակվում են մաքրակարով, ծալքով և զարդակարով: Կոճակներ՝ սպիտակ գույնի, տրամագիծը՝ 1 սմ,

		քանակը՝ 7-8 հատ։ Կոճակները կարում են խաչաձև կարով՝ մեքենայական ամրացմամբ։ Բոլոր կարերի ամրացումը կատարվում է ստանդարտ 301 կարի տեսակով։ Ձախ կրծքավանդակի հատվածում տեղադրվում է «Հայփոստ» լոգոտիպը։ Կիրառվող տեխնոլոգիան՝ ասեղնագործություն։ Ասեղնագործման թելերը պետք է լինեն բարձրորակ պոլիեսթերային՝ գույնի կայունությամբ և մաշվածության դիմացկունությամբ։ Յուրաքանչյուր պատրաստի արտադրանք փաթեթավորվում է առանձին թափանցիկ պոլիէթիլենային տոպրակով։ Տոպրակի վրա պարտադիր նշվում է՝ չափսը, նյութի կազմը, լվացման եղանակը, արտադրամասի անվանումը։ Պատվիրատուի կողմից նախնական հաստատման համար ներկայացվում է մեկ նմուշային արտադրանք։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՓ-ԷԱՃԱՊՁԲ-25/85 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
1		